# Հաշվետվություն

Ես՝ Բաբկեն Մկրտչի Գաբրիելյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչությունում (այսուհետ՝ Վարչություն) որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (22.10.2024-21.10.2025թթ.) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, որտեղ ուսումնասիրել եմ թվով 1 գնման ընթացակարգի շրջանակներում Վարդենիկ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման նախագծա- նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ- նախահաշիվները, կատարողական ակտերի կազման ճշտությունը և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:

2. Խմբի կազմում մասնակցել եմ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում իրականացվող ուսումնասիրության աշխատանքներին, մասնավորապես՝ ուսումնասիրել եմ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ- նախահաշիվները, կատարողական ակտերի կազման ճշտությունը և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:

3. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, որտեղ ուսումնասիրել եմ թվով 1 գնման ընթացակարգերի շրջանակներում ոռոգման ջրատարի կառուցման նախագծա- նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ-նախահաշիվները, կատարողական ակտերի կազման ճշտությունը և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:

4. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում ուսումնասիրել եմ թվով 2 գնման ընթացակարգերի շրջանակներում կառուցված դպրոցների նախագծա- նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ- նախահաշիվները, կատարողական ակտերի կազման ճշտությունը: Այնուհետև գործուղվել եմ ՀՀ Վայոց Ձորի մարզի Չիվա

բնակավայր, կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:

5.Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Տավուշի մարզ, որտեղ ուսումնասիրել եմ ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանի պատվերով իրականացված թվով 2 պայմանագրերի շրջանակներում ճանապարհների նախագծա- նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ- նախահաշիվները, կատարողական ակտերի կազմման ճշտությունը և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:

6. Վարչության կողմից իրականացված մշտադիտարկումների շրջանակներում գործուղվել եմ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնք, որտեղ ուսումնասիրել եմ « Բնապահպանական ԾԻԳ» պետական հիմնարկի պատվերով իրականացված թվով 4 պայմանագրերի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների նախագծա- նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ- նախահաշիվները, կատարողական ակտերի կազմման ճշտությունը և կատարել հսկիչ չափագրումներ: Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմել եմ համապատասխան արձանագրություններ:

7.Աջակցել եմ Վարչության գործառույթների շրջանակում իրականացվող աշխատանքներին և կատարել անմիջական ղեկավարի այլ հանձնարարականներ:

ՀՀ ՊՎԾ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության

վարչության փորձագետ Բաբկեն Գաբրիելյան

22.10. 2025թ